Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունվարի 24 -ի N 81 -Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ԳՆՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գնով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակը Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին մատչելի գնով դիզելային վառելանյութի ձեռքբերման հարցում աջակցելն ու հողերի արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը նպաստելն է:

2. Սույն ծրագրի շրջանակներում նախատեսված 17041300.0 լիտր դիզելային վառելանյութի վաճառքն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համակարգի կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա՝ համաձայն աղյուսակի:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը պայմանագրային հիմունքներով համապատասխան ֆինանսական միջոցներ է հատկացնում մատակարար ընկերությանը (այսուհետ՝ մատակարար) գործող նորմատիվներին և ստանդարտներին համապատասխան, 17041300.0 լիտր դիզելային վառելանյութը Հայաստանի Հանրա-

պետության մարզերի հողօգտագործողներին՝ համայնքներում մեկ լիտրը 350 դրամ արժեքով վաճառելու համար:

4. Հայաստանի Հանրապետության մարզպետները՝

1) ըստ համայնքների հաստատում, անհրաժեշտության դեպքում փոխում են մարզին հատկացված դիզելային վառելանյութի բաշխումը՝ համաձայն N 1 ձևի, և ծրագիրը հաստատվելուց հետո 10-օրյա ժամկետում ներկայացնում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ մատակարարին տրամադրելու համար.

2) Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում դիզելային վառելանյութը՝ համաձայն աղյուսակի, Հայաստանի Հանրապետության մարզերում ամբողջությամբ չվաճառվելու դեպքում տեղեկատվություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ չիրացված դիզելային վառելանյութի խմբաքանակի վերաբերյալ՝ վերաբաշխում կատարելու համար.

3) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են դիզելային վառելանյութ գնել ցանկացող հողօգտագործողների ցուցակների կազմումը, ծրագրով նախատեսված գնով և քանակով գումարների հավաքագրումը և աջակցումը մատակարարին դրա դիմաց դիզելային վառելանյութը հողօգտագործողներին հատկացնելու գործում: Հավաքագրված գումարները փոխանցում են մատակարարին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի և մատակարարի միջև կնքված պայմանագրի.

4) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են համայնքներում ծրագրի շրջանակներում դիզելային վառելանյութ գնած շահառուների ցուցակների հավաքագրումը՝ համաձայն N 2 ձևի, և այդ ցուցակների պահպանությունը՝ տեղեկատվությանը տիրապետելու համար.

5) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են ծրագրի շրջանակներում մարզի համայնքների համար նախատեսված, փաստացի վաճառված դիզելային վառելանյութի քանակի և շահառուների մասին տեղեկատվության հավաքագրումը, հաստատումը՝ համաձայն N 3 ձևի, մեկական օրինակ տրամադրելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը և մատակարարին:

5. Մատակարարը պարտավոր է՝

1) համաձայն Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից ըստ համայնքների հաստատված ցանկերի՝ վաճառել գործող նորմատիվներին և ստանդարտներին համապատասխան 17041300.0 լիտր դիզելային վառելանյութ.

2) Հայաստանի Հանրապետություն ներմուծված դիզելային վառելանյութի որակը հավաստելու համար՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դրա լաբորատոր փորձաքննության արդյունքները.

3) հողօգտագործողներին դիզելային վառելանյութի վաճառքն իրականացնել մեկ լիտրը՝ 350 դրամ արժեքով.

4) համայնքների հողօգտագործողներից փաստացի հավաքագրված գումարների դիմաց դիզելային վառելանյութը մատակարարել համապատասխան համայնքին՝ համայնքի ղեկավարի հետ կազմելով դիզելային վառելանյութի հանձնման-ընդունման երկկողմանի հաստատված ակտ՝ համաձայն N 4 ձևի.

5) մարզպետների կողմից հաստատված ցանկով դիզելային վառելանյութը համայնքներում ամբողջությամբ չվաճառվելու դեպքում տեղեկացնել համապատասխան մարզպետարանին՝ չիրացված խմբաքանակի վերաբաշխման նոր ցանկ հաստատելու համար.

6) Հայաստանի Հանրապետության մարզերին հատկացված և Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից ըստ համայնքների հաստատված դիզելային վառելանյութն ամբողջությամբ չիրացվելու դեպքում չիրացված դիզելային վառելանյութի քանակի համար տրամադրված սուբսիդիան վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետա-

կան բյուջե՝ ծրագրի կատարման մասին հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

7) ստուգել և հաստատել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կողմից լրացված N 3 ձևերը և դրանց պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ու համապատասխան մարզպետարաններ.

8) N 3 ձևով ներկայացված տեղեկատվության մեջ անճշտություններ հայտնաբերելու դեպքում տեղեկատվություն ներկայացնել համապատասխան մարզպետարան՝ ճշտումներ կատարելու համար.

9) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու համար, Հայաստանի Հանրապետության մարզերում և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համակարգի կազմակերպություններում 17041300.0 լիտր դիզելային վառելանյութի վաճառքը մինչև 2013 թվականի հունիսի 1-ն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել՝

ա. հաշվետվություն ծրագրի կատարման մասին,

բ. ֆինանսական հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Աղյուսակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ԳՆՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Մարզի անվանումը	Դիզելային վառելանյութի գարնանը հատկացված քանակը (լիտր)
Արագածոտն	995000
Արարատ	1873500
Արմավիր	2342000
Գեղարքունիք	4098500
Լոռի	1171000
Կոտայք	175600
Շիրակ	3513000
Սյունիք	1463800
Վայոց ձոր	632000
Տավուշ	761200
<<Գյումրու սելեկցիոն կայան>> ՓԲԸ	11700
<<Երկրագործության ԳԿ>> ՊՈԱԿ	2300
<<Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի ԳԿ>> ՊՈԱԿ	1700
Ընդամենը	**17041300**

Ձև N 1

Հաստատում եմ՝
ՀՀ _____ մարզպետ
_____
_____
____ _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Համայնքը	Հատկացված դիզելային վառելանյութի քանակը (լիտր)	Հատկացված դիզելային վառելանյութի հավաքագրման ենթակա գումարը (դրամ)
1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			
7.			
8.			
Ընդամենը			

Գյուղատնտեսության և
բնապահպանության վարչության պետ ----------
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև N 2

Ց ՈՒ Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ ԳՆԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ

NN ը/կ	Անունը, հայրանունը, ազգանունը	Անձնագրի տվյալները	Գնված դիզելային վառելանյութի քանակը (լիտր)	Ստորագրությունը
Ընդամենը				

Համայնքի ղեկավար _____

_____

(Կ.Տ.) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 3

Հաստատում եմ՝
ՀՀ _____ մարզպետ
_____
_____
____ _____ 20 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ՓԱՍՏԱՑԻ ՎԱՃԱՌՎԱԾ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ (20 ԹՎԱԿԱՆԻ _____ -Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ)

NN ը/կ	Համայնքը	Համայնքի ղեկավարի անունը, ազգանունը	Համայնքի համար նախատեսված դիզելային վառելանյութի քանակը (լիտր)	Համայնքում փաստացի վաճառված դիզելային վառելանյութի քանակը (լիտր)	Դիզելային վառելանյութ գնած շահառուների թիվը	Համայնքի ղեկավարի ստորագրու-թյունը
Ընդամենը						

Մատակարար կազմակերպության անվանումը _____
(Կ.Տ.) (ստորագրությունը)

Ձև N 4

Ա Կ Տ

ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության _____ մարզի _____ համայնքի ղեկավար _____ -ը, մի կողմից, և _____ ընկերության տնօրեն _____-ը, մյուս կողմից, սույնով հաստատում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 24-ի N 81 -Ն որոշման շրջանակներում, համայնքի համար մարզպետի կողմից հաստատված չափաքանակին համապատասխան դիզելային վառելանյութի քանակի մատակարարման համար _____ ընկերության հաշվեհամարին փոխանցված _____ _____ դրամի դիմաց մատակարարը 20 __ թվականի _____-ին համայնքին է հանձնել _____ լիտր դիզելային վառելանյութ:

ՀԱՆՁՆԵՑ	ԸՆԴՈՒՆԵՑ
_____-ի տնօրեն	_____համայնքի ղեկավար
_____	_____
	(ստորագրությունը)
_____	_____
(Կ.Տ.) (ստորագրությունը)	(Կ.Տ.) (անունը, ազգանունը)